ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«***14*** » ***դեկտեմբերի 2022թ.*** ***N 584-Մ***

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 780-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 3-րդ բաժնի 15-րդ կետի 4-րդ ենթակետը և հաշվի առնելով գազամատակարարման դադարեցումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Արցախի Հանրապետության նախադպրոցական, հանրակրթական, արտադպրոցական (երաժշտական և արվեստի դպրոցներ, մարզադպրոցներ և մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ), նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բաձրագույն ուսումնական հաստատություններում, որտեղ ջեռուցումը կազմակերպվում է բնական գազով, սկսած 2022 թվականի դեկտեմբերի 14-ից դադարեցնել ուսումնական գործընթացը մինչև գազամատակարարման վերականգնումը:
2. Ուսումնական գործընթացը դադարեցված հանրակրթական ուսումնական հաստատությունների 9-րդ և 12-րդ դասարանների սովորողների համար, պահպանելով սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան ջերմային ռեժիմը, կազմակերպել ուսումնական գործընթաց 2022 թվականի դեկտեմբերի 15-17-ը ընկած ժամանակահատվածում, ընդ որում՝ հնգօրյա աշխատանքային շաբաթով աշխատող ուսումնական հաստատություններում դեկտեմբերի 13-ի բաց թողնված պարապմունքները կազմակերպել դեկտեմբերի 17-ին՝ շաբաթ օրը, իսկ վեցօրյա աշխատանքային շաբաթով աշխատող ուսումնական հաստատություններում դեկտեմբերի 14-ի բաց թողնված դասաժամերը կազմակերպել հաջորդ շաբաթվա ընթացքում:
3. Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի ընդհանուր բաժնին՝ սույն հրամանը առաքել Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարներին և Ստեփանակերտի քաղաքապետին:
4. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Միքայել Համբարձումյանին:

ժամանակավոր պաշտոնակատար ***Հ. Մինասյան***